ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 օգոստոսի 2022թ. N 240-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՆԴԵՎԱԶ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0,195 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան՝ հաշվի առնելով Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի բնակիչ Արամ Գրիգորի Բունիաթյանի դիմումը (մտից՝ N 1322, 23.08.2022 թ.)՝ ***որոշում եմ***՝

1. Արամ, Էդվարդ, Էլմիրա, Զոհրաբ Բունիաթյաններին և Սուսան Անտոնյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղում գտնվող 0,195 հա մակերեսով բնակավայրերի նշանակության տնամերձ (բնակելի կառուցապատման) հողամասին (կադաստրային ծածկագիրը՝ 10-016-001-008) տրամադրել հետևյալ հասցեն՝

Ջերմուկ համայնք, գյուղ Գնդեվազ, 20-րդ փողոց, 4-րդ փակուղի N 9 հողամաս:

3. Սույն որոշումը ենթակա է գրացման ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 թ. օգոստոսի 25
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 օգոստոսի 2022թ. N 241-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,005 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված «Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի» հիման վրա՝ ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի 5-րդ փողոցի վրա գտնվող 0,005 հա մակերեսով բնակավայրերի նշանակության հողամասը, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, ճանաչել որպես առանձին գույքային միավոր և ներկայացնել իրավունքի պետական գրանցման:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասին տրամադրել հետևյալ հասցեն՝

Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Ձախափնյակ թաղամաս 5-րդ փողոց N 1/6:

3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանման կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 թ. օգոստոսի 25
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 օգոստոսի 2022թ. N 242-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՓՈՂՈՑԻ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔԻ N 1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-225-Ն), Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման, հաշվի առնելով Ջերմուկ քաղաքի փաստացի բնակիչ (հաշվառմամբ՝ ԼՂՀ Քաշաթաղի շրջանի գյուղ Գետամեջ) Վաչիկ Հրայրի Ղամբարյանի դիմումները (մտից N 125՝ 26.01.2021 թ. և N 1326՝ 24.08.2022 թ.) ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2022 թվականի օգոստոսի 22-ի N 22082022-10-0010 վկայական) Ջերմուկ քաղաքի Ազատամարտիկների փողոցի 1-ին նրբանցքի N 1 հասցեում գտնվող 60,637 քառակուսի մետր արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 49,68 քմ) ավտոտնակը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 100,4 քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած Ջերմուկ քաղաքի բնակիչ Վաչիկ Հրայրի Ղամբարյանի:
2. Ընդունել ի գիտություն, որ՝

1) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2) շինությունը, համաձայն համայնքի գլխավոր հատակագծի և համայնքին փոխանցված հողերի ցանկի, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

3) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով.
   1) ավտոտնակի 1 քառակուսի մետրի համար՝ 1100 (հազար հարյուր) դրամ (տարածագնահատման 11-րդ գոտի, կիրառված գործակիցը՝ 0.11).
   2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 810 (ութ հարյուր տաս) դրամ:
4. Վաչիկ Հրայրի Ղամբարյանը պարտավոր է վճարել՝
   1) համայնքապետարանի 900365000042 հաշվեհամարին՝66700 (վաթսունվեց հազար յոթ հարյուր) դրամ՝ ավտոտնակի գինը,
   2) համայնքապետարանի 900365031625 հաշվեհամարին՝81350 (ութսունմեկ հազար երեք հարյուր հիսուն) դրամ՝ հողամասի գինը.

5. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Վաչիկ Հրայրի Ղամբարյանի կողմից:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Վաչիկ Հրայրի Ղամբարյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

2022 թ. օգոստոսի 25
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 օգոստոսի 2022թ. N 243-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՁԱԽԱՓՆՅԱԿ ԹԱՂԱՄԱՍԻ 4-ՐԴ ՓՈՂՈՑԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2021 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-397-Ն օրենքի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ և 55-րդ կետերի, 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն և N 912-Ն որոշումների, հաշվի առնելով Ջերմուկ քաղաքի բնակիչ Շեկսպիր Անդրանիքի Խանամիրյանի դիմումը (մտից՝ 2021 թվականի հունվարի 26-ի N 115)՝ ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի 4-րդ փողոցի վրա գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 47,1 քառակուսի մետր մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 47,1 քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 44 քմ) ավտոտնակը (այսուհետ՝ շինություն) համարել Ջերմուկ համայնքի սեփականությունը և ճանաչել օրինական. ՀՀ Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ *2022VQXCW6*:

2. Ընդունել ի գիտություն, որ՝

ա) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

բ) շինությունը, համաձայն համայնքի գլխավոր հատակագծի և համայնքին փոխանցված հողերի ցանկի, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

գ) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Հաստատել սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված շինության և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասի հատակագծերը:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված շինությանը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասին տրամադրել հետևյալ հասցեն՝

Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Զախափնյակ թաղամաս 4-րդ փողոց, 1-ին նրբանցք N 8:

5. Սույն որոշումից ծագող իրավունքի պետական գրանցման օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկություն ներկայացնել ինքնակամ կառույցն իրականացրած Ջերմուկ քաղաքի բնակիչ Շեկսպիր Անդրանիքի Խանամիրյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունը և համապատասխան հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու մասին:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

2022 թ. օգոստոսի 25
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 օգոստոսի 2022թ. N 244-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՆԴԵՎԱԶ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ՝ ՀԱՐԱԿԻՑ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ, ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան՝ հաշվի առնելով Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի բնակիչ Արթուր Աղվանի Մկրտչյանի դիմումը (մտից՝ N 1341, 25.08.2022 թ.) ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղում գտնվող բնակելի տանը նախկինում տրված հասցեի՝ գյուղ Գնդեվազ, 3-րդ փողոց N 2, ճշտման նպատակով այն վերահասցեավորել՝

Ջերմուկ համայնք, գ. Գնդեվազ, 2-րդ փողոց, 1-ին փակուղի N 2:

2. Սույն որոշումը ենթակա է գրացման ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

2022 թ. օգոստոսի 25
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 օգոստոսի 2022թ. N 245-Ա

«ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, հիմք ընդունելով «ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի գլխավոր մասնագետի՝ 2022 թվականի օգոստոսի 25-ի հայտերը՝ (մտիցներ NN 1334-1338, 25.08.2022 թ.)՝ ***որոշում եմ՝***

1. Սուբվենցիոն ծրագրի շրջանակներում ստորև թվարկվող աշխատանքների կատարման համար նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման նպատակով «ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկին տալ նախագծման թույլտվություն՝

ա/ Ջերմուկ համայնքի Կեչուտ գյուղի գերեզմանատների բարեկարգում,

բ/ Ջերմուկ քաղաքի ճոպանուղու ավտոկայանատեղիի ասֆալտապատում,

գ/ Ջերմուկ քաղաքի բազմաբնակարան բնակելի շենքերի բակային տարածքների ասֆալտապատում,

դ/ Գնդեվազ գյուղի խմելու ջրի ջրագծի հիմնանորոգում,

ե/ Գնդեվազ գյուղի խմելու ջրի ակունքի հիմնանորոգում:

2. «ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություններ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

2022 թ. օգոստոսի 25
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 օգոստոսի 2022թ. N 246-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ՓԱՍՏԱՑԻ ԲՆԱԿՎՈՂ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԷՎԵԼԻՆԱ ԱՐԹՈՒՐԻ ԲԱԲԱՋԱՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԽՆԱՄԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետին, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 134-135-րդ հոդվածներին, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ և 37-րդ հոդվածներին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշման դրույթներին համապատասխան՝ ***որոշում եմ՝***

1. Հիմք ընդունելով Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի բնակիչ Արմինե Արագեղեցիկի Արսենյանի դիմումը (մտից՝2022 թվականի օգոստոսի 24-ի N 1332), Միասնական Սոցիալական Ծառայության Ջերմուկի տարածքային կենտրոնի եզրակացությունը (մտից՝ 2022 թվականի օգոստոսի 25-ի N 1343) և Ջերմուկ համայնքի ղեկավարին կից գործող խնամակալության և հոգաբարձության հարցերով հանձնաժողովի 2022 թվականի օգոստոսի 25-ի թիվ 8 արձանագրությանը կից եզրակացությունը՝ Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքում ժամանակավորապես բնակվող անչափահաս Էվելինա Արթուրի Բաբաջանյանի (ծնված՝ 2014 թվականի մարտի 28-ին) նկատմամբ սահմանել խնամակալություն՝ հաշվի առնելով նրա՝առանց ծնողական խնամքի մնալու փաստը:

2. Էվելինա Արթուրի Բաբաջանյանի խնամակալ նշանակել մայրական կողմի տատիկին՝ Արմինե Արագեղեցիկի Արսենյանին (ծնված 25.10.1965 թ.):

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմինե Արագեղեցիկի Արսենյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 թ. օգոստոսի 25
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 օգոստոսի 2022թ. N 247-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ՝ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՉՈՐՐՈՐԴ ՀԱՐԿԻ ՏԱՐԱԾՔԸ, ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան՝ հաշվի առնելով Ջերմուկ քաղաքի նախկին բնակիչ՝ ներկայում հանգուցյալ Աշոտ Մարգարյանի իրավահաջորդ Աշխեն Խաչիկի Ալավերդյանի դիմումը (մտից՝ N 1331, 24.08.2022 թ.) ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Շահումյան փողոցի N 15 հասցեում գտնվող շինության չորրորդ հարկում գտնվող տարածքի նախկինում տրված հասցեի՝ ք. Ջերմուկ, Շահումյան-15[1] IV հարկում գտնվող տարածք, ճշտման նպատակով այն վերահասցեավորել՝

Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Ս. Շահումյան փողոց, 15-րդ շենք N 15/1 տարածք:

2. Սույն որոշումը ենթակա է գրացման ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 թ. օգոստոսի 26
ք. Ջերմուկ